



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԱՊԱՅՈՎԵՑ ԱՐԵԼԻ ՔԱՆ 1.2 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄ

- ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՀԵՐԻ ԵՒ ԾԵՐԸԸ ՆԱՃԱՐԵԱՆ ԿԸ ՆՈՒՐԵՆ 250,000 ՏՈԼԱՐ
- ՓՐՈՖ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՏԻԿԻՆ ԹԱՄԱՐԱ ՊԱՐԱՍՄԵԱՆ ԿԸ ՆՈՒՐԵՆ “APPLE”-Ի 500 ԲԱԺՆԵՏՈՄՍ
- ԲԱՐԵԾ. ՄԱՐՔ ՍՐԿ. ԵՒ ՏԻԿԻՆ ՄԱՐԿԱՐԵԹ ԾԻՐԻՆ ԿԸ ՍՏԱՆՁՆԵՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ ՀԻՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի յառաջիկայ Հովուապետական այցելութեան առիթով, ի պատիւ Նորին Ս. Օծուրեան Նախատեսուած մեծարանքի ընդունելութիւն-ճաշկերոյթին մեկնարկի ձեռնարկը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 11 Օգոստոսի երեկոյեան, Կլեմտէյի «Քարուսէլ» ճաշարանին մէջ, եւ պերճախօս արտայայտութիւն մը եղաւ այն նշանաբանին, թէ «լաւ սկսուած գործ մը արդէն յաջողած կը նկատուի»:

16 Հոկտեմբեր 2011ին Նախաձեռնուած ճաշկերոյթին մեկնարկը յաջողութեամբ պսակուեցաւ բազմաթիւ իմաստներով, եւ շօշափելի երաշխիք հանդիսացաւ Հովուապետական այցելութեան նպատակներուն իրականացման: Ազգ. Վարչութեան ու անոր կողքին գործող Հայրապետական մեծարանքի ճաշկերոյթի յանձնախումբին կողմէ կազմակերպուած մեկնարկի ձեռնարկը կը վայելէր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը:

Հրաւերին ընդառաջած էին շրջանիս Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէն, ՀՕՄԻ, Հ.Մ.Ը.Մ.Ի, Հայ Կրթական Հիմնարկի, հայրենակցական, բարեսիրական, մշակութային միութեանց եւ մեր Թեմի եկեղեցիներուն ու հայկական այլ միաւորներու ներկայացուցիչները: Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տեարք Խաժակ Տիքիճեան եւ Վիգէն Գասապեան, Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ:

Հանդիպումը եղաւ գեղեցիկ արտայայտութիւն մը այն խանդավառութեան ու եռուն աշխատանքին, որ ստեղծուած է Հովուապետական շնորհաբեր այցելութեան Նախօրեակին: Երեկոյին հանդիսավարներն էին Մեծարարանքի ճաշկերոյթի Յանձնախումբի անդամներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քիւնյ. Աթմաճեան եւ Տիկին Ճասիկ

Ճառահեան: Առաջնորդ Սրբազանին բացման աղօթքն ետք, հանդիսավարները ողջունեցին հիւր ներկայացուցիչներն ու բարերարները: Ողջոյնի խօսք արտասանեցին Տիար Խաժակ Տիքիճեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան: Տիար Տիքիճեան յայտարարեց, թէ ինչպէս Վեհափառ Հայրապետի նախընթաց այցելութիւններուն, այս անգամ եւս, Ազգային Առաջնորդարանի մեծ ընտանիքն ու մեր գաղութը խանդավառութեամբ ու բերկրալի աշխատանքով լծուած են Հովուապետական այցելութեան պատրաստութեան: Ան շեշտեց, որ Վեհափառին այցելութիւնը մեծ աշխատանք կ'ենթադրէ, սակայն նաեւ վստահութիւն յայտնեց, որ շնորհիւ ազգայիններու, գործակից մարմիններու եւ յանձնախումբերու արդիւնաւոր աշխատանքին, այս այցելութիւնը եւս արժանաւոր կերպով պիտի իրագործուի: Տիկին Ռ. Պօղոսեան, իր կարգին, շեշտեց գործակցութեան ու կազմակերպ աշխատանքի կարեւորութիւնը, նշելով, որ այս երեկոն ու արդէն իսկ ընթացք առած աշխատանքները ցոյց կու տան, որ Ազգ. Առաջնորդարանը իր կողքին ունի աշխատող ձեռքեր ու նուիրեալներու բանակ մը, որ բաղկացած է բարերարներէն, բարեկամներէն ու գործակից անհատներէ ու միաւորներէն: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց ներկաներուն, նուիրատուներուն ու աշխատանքի դաշտերուն մէջ գործողներուն:

Ներկայ հրաւիրեալներուն ընդհանուր գիծերու մէջ ներկայացուեցաւ Հովուապետական այցելութեան ժամանակացոյցը, որ կ'երկարի 6էն մինչեւ 23 Հոկտեմբեր: Գլխաւոր հանգրուանները պիտի ըլլան 6 Հոկտեմբերի երեկոյեան ժողովրդային դիմաւորումն ու աջահամբոյրը՝ Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ, Հոլիվուտ, Դպրեվանքին նուիրուած ձեռնարկը՝ 7 Հոկտեմբերի երեկոյեան, Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ, Հայրապետական Ս. Պատարագն ու մեծարանքի ճաշկերոյթը՝ 16 Հոկտեմբերին, յաջորդաբար՝ Ս. Աստուածածին եկեղեցոյ ու «Եունիվըրսըլ Հիլթըն» պանդոկին մէջ, Վեհափառ Հայրապետին “Taking the Church to the People” հատորին շնորհահանդեսը, Վեհափառ Հայրապետին կողմէ դասախօսութիւն՝ UCLA համալսարանին մէջ. տակաւին, ծրագրուած են այցելութիւններ՝ ծխական շրջաններու, ներառեալ Ֆրեզսօ, Սան Ֆրանսիսքօ, Լաս Վեկաս, նաեւ շարք մը պաշտօնական հանդիպումներ:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը հրաւիրուեցաւ արտասանելու իր սրտի խօսքը: Ներկաները ողջունելէ ու Ազգ. Առաջնորդարանի նախաձեռնութիւններուն զօրակցողներուն շնորհակալութիւն յայտնելէ ետք, ան կարեւորութեամբ կանգ առաւ Նորին Ս. Օծութեան այցելութեան հիմնական նպատակներուն վրայ, որոնք են **հոգեւոր կեանքի վերանորոգում, Հայ Դպրոցի վերածաղկում եւ Հայ ժողովուրդի պահանջատիրութեան հզօրացում**: Ան յիշեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռը, մեր ժողովուրդին նման զոհ՝ Տեղասպանութեան ու բռնագաղթի, միշտ ալ կանգնած է մեր իրաւունքներու պաշտպանութեան առաջին դիրքերուն վրայ, յոյս, լոյս ու կեանք սփռելով մեր ժողովուրդին մէջ: Առաջնորդ Սրբազանը նաեւ շեշտեց, որ Հայ Դպրոցը միշտ ալ եղած է Վեհափառ Հայրապետին, մեր Ս. Աթոռին ու Թեմերուն մտասուեռումներուն

գլխավոր կիզակետը, ու այդպես ալ պիտի ըլլայ Հովուապետական յառաջիկայ այցելութեան առիթով:

Սրտի խօսք արտասանեց Յ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան, որ շնորհակալութեան ու բարեմաղթութիւններու կողքին, շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութիւնն ու բոլոր գործակիցները, որոնք յանձն առած են Վեհափառ Հայրապետի դիմաւորման աշխատանքը, եւ ընդգծեց, որ Վեհափառ Հայրապետին այցելութեան առիթով, հոգեւոր կեանքի արժեւորման ու մեր Դատին զօրակցութեան կողքին, մեծ արժէք ու կարեւորութիւն ունի Հայ Դպրոցին օգտակար ըլլալու առաջադրանքը:

Հանդիսավարները այնուհետեւ սկսան յայտարարել ձեռնարկի սեղաններու հովանաւորները: Անոնք յայտնեցին, թէ սեղանի հովանաւորումէն անկախ, մեծարանքի ճաշկերոյթին հովանաւորման համար նկատի առնուած են նուիրատուներու «Կիլիկիոյ Ուխտաւորներ» (5,000 տոլար եւ ամէլի), «Կիլիկեան Ասպետներ» (10,000 տոլար եւ ամէլի), «Կիլիկեան Դուքսեր» (25,000 տոլար եւ ամէլի), «Կիլիկեան Իշխաններ» (50,000 տոլար եւ ամէլի) եւ «Կիլիկիոյ Պահապաններ» (100,000 տոլար եւ ամէլի) շրջանակները: Այս հրաւիրուեցան ծխական շրջաններու ներկայացուցիչները, յայտարարելու հովանաւորումի իրենց խոստումները:

Առաջնորդ Սրբազանը ամէլի եւս ջերմացուց մթնոլորտը, յայտարարելով ձեռնարկին ու Հովուապետական այցելութեան գլխավոր հովանաւորներն ու հիւրընկալները: Սրբազան Հայրը ունէր գեղեցիկ անակնկալներ. ան յայտարարեց, թէ նոր բարերարներ ու բարեկամներ միացած են Ազգ. Առաջնորդարանիս վաղեմի բարերարներու ու հովանաւորներու փաղանգին, որոնց կատարած նուիրատուութիւնները թուեց ան, իբրեւ յաւելում՝ հանդիսավարներուն կատարած յայտարարութիւններուն: Առաջնորդ Սրբազանը յայտարարեց նաեւ օրուան մեծ անակնկալները: Առաջին մեծ անակնկալը եղաւ ճաշկերոյթի գլխավոր հիւրընկալներուն յայտարարութիւնը, յանձնիս ֆրեզկոյաբնակ բարեշնորհ Մարք Սրկ. Շիրինի եւ Տիկնոջ՝ Մարկարեթի, որոնք խոստացած են իշխանավայել նուիրատուութիւն մը: Երկրորդ մեծ անակնկալն էր Առաջնորդարանիս բարերարներէն Փրոֆ. Յարութ Պարսամեանի եւ ազնիւ Տիկնոջ՝ Թամարայի նորագոյն նուիրաբերումը. Փրոֆ. Պարսամեան, որ Ազգ. Առաջնորդարանիս մօտ հաստատած է հայ ուսանողներու համար կրթանպաստի հիմնադրամ մը, բարերարն է նաեւ Օրէնճ Զառնթիի Հայ Կեդրոնին, Հայրապետական այցելութեան առիթով Առաջնորդարանիս կը նուիրէ «Apple» ընկերութեան 500 բաժնետոմս, հանդիսանալով Հայրապետական այցելութեան գլխավոր հովանաւորներէն մէկը: Երրորդ մեծ անակնկալն էր Առաջնորդարանիս վաղեմի բարեկամներէն ու նուիրաբերողներէն՝ Տիկնի Սիլվա Չագմագեանի 100,000 տոլարի նուիրատուութեան խոստումը: Վերջապէս, երեկոյի մեծագոյն յայտնութիւնն էր Հ.Ս.Ը.Ս.ի, Հայ Դատի, Հայ Մշակութային Հիմնարկութեան, Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան բարեկամներէն ու բարերարներէն Տիար Հերի Նաճարեանի եւ Տիկնոջ՝ Շերլի 250,000 տոլարի իշխանական նուիրատուութեան խոստումը:

Ներկաները ծափողջոյններով դիմաւորեցին այս մեծ անակնկալները: Նոյն ջերմ խանդավառութեամբ յայտարարուեցաւ, որ մեծարանքի ճաշկերոյթի հիւրերուն թիւը արդէն հասած է գրեթէ հազարի, ինչ որ նմանապէս ընկալուեցաւ ջերմ ծափողջոյններով:

Առաջնորդ Սրբազանը, իւրաքանչիւր մեծ անակնկալէ ետք, սրտի խօսք արտասանելու համար յաջորդաբար հրաւիրեց գլխաւոր հովանաւորներ՝ բարեշնորհ Մարք Սրկ. Շիրինը, Փրոֆ. Պարսամեանն ու Տիար Յերի Նաճարեանը: Մարք Սարկաւագ, որ եղած է Դպրեվանքի սաներէն, ինչպէս նաեւ Ֆրեզլոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ բազմամեայ ծառայողներէն, համեստութեամբ յայտարարեց, որ իբրեւ երախտագիտութեան դոյզն արտայայտութիւն՝ իր եւ տիկնոջ կողմէ, իրենց համեստ լուման կը ձգեն մեր Ս. Աթոռին, Ազգային Առաջնորդարանին եւ Հայ Դպրոցի գանձանակին մէջ: Ան այս առիթով նաեւ շնորհաւորութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին՝ կուսակրօն քահանայ ձեռնադրութեան 35րդ տարեդարձին առիթով: Փրոֆ. Պարսամեան յայտարարեց, որ իրեն համար հոգեկան մեծ գոհունակութիւն է այս նուիրաբերումով մասնակից ըլլալ Վեհափառ Հայրապետի հիւրընկալման, եւ վերահաստատեց իր նուիրումն ու զօրակցութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Ազգ. Առաջնորդարանին: Վերջապէս, Տիար Յերի Նաճարեան, իր եւ Տիկնոջ՝ Շերլի կողմէ շնորհակալութիւն յայտնեց, որ իրեն առանձնաշնորհումը կ'ընծայուի այս նուիրատուութեան ճամբով մասնակից ըլլալու Վեհափառ Հայրապետի ընդունելութեան ու մեծարանքին, որուն համար պատիւ կը զգայ: Ան յայտնեց, թէ Վեհափառի մօտալուստ այցելութիւնը խանդավառութեան ու ցնծութեան պահ մը կը ստեղծէ եւ ինք ուրախ է, որ մասնակից է այս մթնոլորտին:

Այս անակնկալ եւ գօտեակոյիչ լուրերուն ստեղծած խանդավառ ու յաջողութիւն աւետող մթնոլորտին մէջ, երեկոն վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին աղօթքով ու «Կիլիկիա»ի խմբերգումով:

Վարձքը կատար՝ մեր բոլոր նուիրեալներուն, եւ շնորհակալութիւն՝ մեր բարերարներուն:

PONTIFICAL BANQUET KICK-OFF A GREAT SUCCESS AS PLEDGES EXCEED 1.2 MILLION

- MR. & MRS. HARRY & CHERYL NADJARIAN PLEDGE \$250,000
- PROF. & MRS. HARUT & TAMARA BARSAMIAN DONATE 500 SHARES OF APPLE
- DEACON & MRS. MARK & MARGARET SHIRIN TO HOST THE PONTIFICAL BANQUET

On Thursday, August 11, 2011, a capacity crowd of Western Prelacy sponsors and friends gathered at Carousel Restaurant to pledge their support at the Kick-off to the Pontifical Banquet which will be held on October 16 in honor of H.H. Catholicos Aram I. Held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Kick-off brought together sponsors and

community members at a festive evening filled with good cheer and surprises. Among the guests in attendance were Clergy members, Central Executive members Mr. Khajag Dikijian and Mr. Vicken Kassabian, and representatives from the ARF Central Committee, ARS, Homenetmen, AEF, and parishes.

Once all the guests had arrived, the program began with the invocation by the Prelate. Masters of Ceremonies Rev. Fr. Vazken Atmajian and Mrs. Jasik Jarahian then welcomed the guests. Welcoming remarks were also delivered by Mr. Khajag Dikijian and Executive Council Chairlady Mrs. Rima Boghossian. Mr. Dikijian stated that the Prelacy and its parishioners are enthusiastically preparing for the Pontifical Visit, and expressed confidence that this upcoming visit will be successful just as the last visit was. Mrs. Boghossian stressed the importance of collaboration in the planning of the Pontifical Visit, and noted that the success of the evening and the work that has already been carried out is confirmation of the Prelacy's strong support system of working hands, sponsors, and friends. She also thanked the guests and members of the various Pontifical Visit Committees for their support and efforts.

The guests were given a brief report on the schedule of His Holiness during the Pontifical Visit. They were reminded that the visit will take place from October 6 to the 23rd, and were informed of some of the major events planned such as a community-wide welcoming on October 6 at St. Garabed Church in Hollywood, the event dedicated to the Catholicosate Seminary on October 7 at the Pasadena Armenian Center, Pontifical Divine Liturgy at St. Mary's Church and the Pontifical Banquet at the Universal Hilton on October 16, presentation of the Pontiff's latest book "Taking the Church to the People", visits to parishes, and meetings with dignitaries and public officials.

The Prelate then delivered his remarks, first welcoming the guests and thanking all those who have lent their efforts and support to the planning of the Pontifical Visit. He reiterated the main foci of the Pontifical Visit, which are **spiritual renewal, the further anchoring and continued progress of Armenian schools, and reassertion of our spirit of national aspirations**. Sharing a history of exile with our people, the Catholicosate of the Holy See of Cilicia remains on the front lines as we reassert our spirit of national aspirations and is our beacon of hope and light, said the Prelate. He also stressed that Armenian Schools have long been a primary focus of His Holiness and of the Catholicosate's mission, and that our schools will be the main focus during the Pontifical Visit.

On behalf of the ARF Central Committee, Mr. Avedik Izmirlian extended his best wishes to the Prelate, Executive Council, and all the committees and committee members who have delved into the crucial work of planning for the Pontifical Visit, and noted that alongside the spiritual renewal and the furthering of the Armenian Cause is the goal of offering full support to Armenian Schools.

The MCs then announced the sponsorship levels available, Table Sponsor (\$2,500), "Pilgrim of Cilicia" Circle (\$5,000), "Knight of Cilicia" Circle (\$10,000), "Duke of Cilicia" Circle (\$25,000), "Prince of Cilicia" Circle (\$50,000), and "Guardian of Cilicia" Circle (\$100,000), and invited representatives of parishes to announce their pledges, adding to the already festive mood of the evening.

The guests became more elated as the Prelate began announcing the main sponsors and hosts of the Pontifical Banquet and Visit and revealed some wonderful surprises. The first major announcement was that Deacon Mark Shirin and his wife Margaret from Fresno were to be the main hosts of the Pontifical Banquet for which they had pledged a very generous donation. The second surprise was that Professor Harut Barsamian and his wife Tamara, who have established a scholarship fund at the Prelacy and are also the benefactors of the Orange County Armenian Center, with their donation of 500 shares of Apple stocks were one of the main sponsors of the Pontifical Visit. The third announcement was a pledge in the amount of \$100,000 by longtime Prelacy friend and supporter Mrs. Silva Tchakmakian. The evening's biggest revelation was the announcement of a \$250,000 pledge by Mr. and Mrs. Harry and Cheryl Nadjarian, who have also over the years so generously lent their support to Homenetmen, the Armenian National Committee, the Armenian Cultural Foundation, and the AMAA.

These announcements were met with great applause and enthusiastic cheers from the guests, which only grew louder with the announcement that the number of guests for the Pontifical Banquet had reached almost one thousand.

After each of his announcements, the Prelate invited Deacon Mark Shirin, Prof. Barsamian, and Mr. Harry Nadjarian to express their sentiments. Deacon Mark, being a Seminary alumnus and long-time servant at Holy Trinity Church, humbly announced that he and his wife were presenting this modest sum towards the Catholicosate of Cilicia, the Prelacy and Armenian Schools as a token of gratitude, and also took the opportunity to congratulate the Prelate on the 35th anniversary of his ordination as a celibate priest. Prof. Barsamian stated that it was a great joy and spiritually fulfilling to be able to participate with his donation to the Pontifical Visit, and reaffirmed his support to the Catholicosate of Cilicia and the Western Prelacy. Mr. Nadjarian, on behalf of his wife and personally, expressed his thanks for the privilege and honor of participating in the welcoming and honoring of His Holiness. He noted that there is excitement and enthusiasm surrounding the Pontifical Visit of His Holiness and expressed his joy for being a part of the festivities.

The evening came to a close with the benediction by the Prelate and the singing of the Cilician anthem.

Much gratitude and blessings to all the sponsors and friends for their support and efforts.